

## ԴՈԿՏՐԻՆԱԼ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու  
սահմանադրական կարգավիճակի բարեփոխումների

հեղինակներ՝  
Ի.գ.դ. պրոֆ. Ա. Ղամբարյան  
Ի.գ.թ. դոցենտ Թ. Շաքարյան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**1. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 4**

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ..... 4

(a) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստական և իրավական կարգավիճակի անհամապատասխանությունը ..... 4

(b) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես դասական կրոնական կազմակերպություն ճանաչելու վտանգները..... 5

(1) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիմնադրվել (գրանցվել) է ֆիզիկական անձի կողմից: .. 5

(2) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կարող է ինքնալուծարվել՝ ..... 6

(c) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նյութական և հոգևոր ժառանգության՝ որպես ազգային հարստության պետական պաշտպանության բացակայությունը ..... 6

1.2. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 6

**2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ (ԴՈԿՏՐԻՆԱԼ, ՊԱՏՄԱԿԱՆ և ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆՆԵՐԸ) ..... 6**

2.1. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ (ԴՈԿՏՐԻՆԱԼ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԸ) ..... 7

(a) Հանրային իրավունքի իրավաբանական անձի դոկտրինը ..... 7

(b) Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ ..... 8

(1) Տեսապատմական տեսանկյունը ..... 8

(2) Իրավահամեմատական տեսանկյունը ..... 8

(c) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ ..... 10

2.2 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ (ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԸ) ..... 11

(a) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանրային իրավական կարգավիճակի օրյեկտիվ-պատմական բնույթը ..... 11

(b) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի հաստատումը բարձրագույն պետաիշխանական ակտով..... 12

(1) Եկեղեցու պետական ճանաչումը 301թ. թագավորի հրովարտակով ..... 12

(2) Պոլտ հայոց պատրիարքության հիմնադրումը 1461թ. օսմանյան կայսրի հրամանով ..... 13

(3) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի հաստատումը 1836թ. ռուսական կայսրի հրամանով ..... 14

(4) Ազգային եկեղեցու օրենսդրական ճանաչումը 1991թ-ին..... 15

(5) Ազգային եկեղեցու սահմանադրական ճանաչումը 2005թ-ին ..... 15

(c) Պետության և Եկեղեցու հանրային-իրավական սիներգիան. դարերի պատմություն ..... 15

(1) Կաթողիկոսի բացառիկ հանրային իրավասությունները ..... 15

(2) Պետության և Եկեղեցու սիներգիան Ազգային եկեղեցական ժողովներում ..... 16

(3) Պետության և Եկեղեցու սիներգիան Աշխարհաժողովներում ..... 17

(d) Միջանկյալ եզրակացություն..... 17

2.3. ԱԶԳԱՅԻՆ (ՊԵՏԱԿԱՆ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԸ) ..... 18

(a) Ազգային եկեղեցիների սահմանադրական ճանաչումն արտասահմանյան երկրներում ..... 18

(b) Եվրոպական դատարանի դիրքորոշումն ազգային եկեղեցու հատուկ կարգավիճակի վերաբերյալ ..... 19

(c) Ազգային եկեղեցու հատուկ կարգավիճակն ամրագրելու արգելք նախատեսող իրավական չափորոշիչի բացակայությունը ..... 20

<b>3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ և ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>21</b>
3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐ .....	21
3.2. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	22
(a) Եկեղեցական ժառանգության՝ որպես ազգային հարստության սահմանադրական ճանաչումը	22
(b) Եկեղեցական ժառանգության պետական պաշտպանությունը .....	22
(c) Եկեղեցական ժառանգության (ազգային հարստության) քաղաքացիական շրջանառության սահմանափակումները.....	23
<b>4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....</b>	<b>24</b>
4.1. ՆԵԳԱՏԻՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ.....	24
4.2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՈՐՎԱԾԻ ՆԱԽԱԳԻԾ .....	25
4.3. ԿԱՊԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՅԼ ՆՈՐՄԵՐԻ ՀԵՏ .....	26
4.4. ԿԱՊԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՅԼ ՆՈՐՄԵՐԻ ՀԵՏ.....	26

*1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի ընդհանուր բնութագիրը և փոփոխությունների ընդհանուր ուղղությունները*

**1.1. Ընդհանուր բնութագիրը. առկա իրավիճակը**

(a) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստական և իրավական կարգավիճակի *անհամապատասխանությունը*: 1995թ. Սահմանադրությամբ ամրագրված չէր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (այսուհետ՝ ՀԱՍԵ կամ Եկեղեցի) կարգավիճակի վերաբերյալ որևէ նորմ: Նրա դերի ու նշանակության, ինչպես նաև որպես ազգային եկեղեցի ճանաչելու մասին դրույթ ամրագրված է 01.06.1991թ. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախաբանում՝

«...նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր զարթոնքը, նրա դարավոր հոգևոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցին որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցին որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար...»:

ՀԱՍԵ որպես ազգային եկեղեցի ճանաչվեց նաև 2005թ. և 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունում, համապատասխանաբար՝ 8.1 և 18-րդ հոդվածներում՝

«Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»:

22.02.2007թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ն ճանաչում է ՀԱՍԵ-ին՝ որպես ազգային եկեղեցի ... և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Թեև սահմանադրորեն ամրագրվել է ազգային եկեղեցու գաղափարը, սակայն ընթացիկ օրենսդրությամբ ՀԱՍԵ շարունակում է համարվել դասական կրոնական կազմակերպություն: Այսպես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի օրենքի 6-րդ հոդվածում օրենսդիրը ամրագրել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են.

- Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ իր ավանդական կազմակերպություններով.

- կրոնական այլ կազմակերպություններ, որոնք ստեղծվում և գործում են իրենց հավատացյալ անդամների շրջանակում՝ սեփական ունեցվածքի ու կանոնադրության համաձայն:

Միննույն ժամանակ, «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով ՀԱՍԵ-ի համար սահմանված են դրույթներ, որոնք փաստացի վկայում են նրա հատուկ իրավաբանական կարգավիճակի մասին: Այսպես.

1. ՀԱՍԵ կողմից ամուսնությունների գրանցման հնարավորություն<sup>1</sup>,

<sup>1</sup> ՀՀ-ն ճանաչում է կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները: Թեև այդ համաձայնագիրը դեռևս ստորագրված չէ, բայց ցանկացած ժամանակ կարող է և ստորագրվել:

2. պետության աջակցությունը ՀԱՍԵ սեփականությունը և ազգային մշակութային ժառանգության մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների պահպանության և հարստացման համար<sup>2</sup>,

3. պետական աջակցություն ՀԱՍԵ-ի ստեղծած ուսումնական հաստատություններին,

4. ՀԱՍԵ-ն իրավունք ունի ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկատներում, տուն-ինտերնատներում, զորամասերում, ազատազրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում և այլն:

Այսպիսով՝ մի կողմից ՀԱՍԵ-ն սահմանադրորեն համարվում է ազգային եկեղեցի<sup>3</sup> (ինչը տրամաբանորեն պահանջում էր նաև ճանաչել նրա հատուկ իրավաբանական կարգավիճակը<sup>4</sup>), մյուս կողմից՝ ընթացիկ օրենսդրությամբ ՀԱՍԵ-ն համարվում է դասական կրոնական կազմակերպություն:

*(b) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես դասական կրոնական կազմակերպություն ճանաչելու վտանգները:* ՀԱՍԵ-ն որպես դասական կրոնական կազմակերպություն ճանաչելու դեպքում նրա ստեղծման, լուծարման և մի շարք այլ մասնավոր-իրավական հարցերով (սնանկացում և այլն) կիրառվում է մասնավոր իրավունքով սահմանված ընդհանուր կարգավորումները:

**(1) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիմնադրվել (գրանցվել) է ֆիզիկական անձի կողմից:**

ՀԱՍԵ-ն որպես մասնավոր իրավունքի իրավաբանական անձ (դասական կրոնական կազմակերպություն) համարելու դեպքում նրա իրավասուբյեկտությունը կախվածության մեջ է դրված պետական գրանցումից:

Պատահական չէ, որ ՀԱՍԵ-ն որպես կրոնական կազմակերպություն հետևյալ անվանումով՝ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» Կրոնական կազմակերպություն, հիմնադրված երկու ֆիզիկական անձանց՝ Հակոբ Գևորգյանի և Ներսիսյան Գարեգին Բ-ի կողմից, գրանցվել է 20.03.1998թ-ին<sup>5</sup>:

2005 թ. սահմանադրական փոփոխություններից հետո (որով Հայաստանի Հանրապետությունը սահմանադրորեն ճանաչում էր ՀԱՍԵ-ի՝ որպես ազգային եկեղեցին) այս հակապատմական փաստը ոչ միայն չվերացվեց, այլ 07.12.2007թ. ՀԱՍԵ-ն երկու ֆիզիկական անձանց կողմից կրկին գրանցվեց որպես կրոնական կազմակերպություն:

<sup>2</sup> Այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

<sup>3</sup> Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Դանիելյանը. Սահմանադրությունը նախ և առաջ իրավական ակտ է, ուստի վերջինիս կոչումը ոչ թե պատմական փաստեր արձանագրելն է, այլ հասարակական հարաբերություններ կարգավորելը: Եվ եթե անգամ Սահմանադրությամբ հղում է արված պատմական փաստերին, ապա դրանք սուկ արձանագրումներ չեն, այլ իրավական նորմի հիպոթեզի բաղադրիչ են, այսինքն՝ դրանցով ընդգծվում է իրավակարգավորման կոնկրետ տարբերակ ընտրելու օրենսդիրի բուն նպատակը: Տե՛ս Դանիելյան Գ. Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017, № 3 (24), էջեր 25-41:

<sup>4</sup> Հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակի մասին հաջորդիվ:

<sup>5</sup> Քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել տակավին I դարում Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ: Հայոց եկեղեցական ավանդույթը հենց այս առաքյալներին է համարում Հայոց եկեղեցու հիմնադիրներ: Տե՛ս Վկայաբանությունն եւ գիտ նշխարաց Ս. Թադէի առաքելոյ եւ Սանդիստոյ կուսի, «Սոփերք Հայկականք», հ. Ը., Վենետիկ, 1853, էջ. 9-102, Վկայաբանություն Սրբոյն Բարդուղիմեոսի առաքելոյ եւ Ս. Ոսկեանց եւ Սուրբասեանց, «Սոփերք Հայկականք», հ. ԺԹ., Վենետիկ, 1854, էջ 5-96, Յովհան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Ս. Յակոբեանի, տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ե. հատոր, Է. դար, Արթիլիաս-Լիբանան, 2005, էջ 987, Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 10, Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 101, Chronique de Michel le Syrien, éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. premier, Paris, 1899, էջ 147 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնէնաց, Թիֆլիս, 1910, էջ 21: Հայաստանում առաքյալների քարոզչության մասին սկզբնաղբյուրների տեղեկությունների քննությունը տե՛ս Անանեան Պ., Քրիստոնեության հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսատրչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ-Ս. Ղազար, 1979:

(2) **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կարող է ինքնալուծարվել՝** Քաղաքացիական իրավունքի ընդհանուր կարգավորումների համաձայն՝ կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է դադարեցվել ինքնալուծարքի հետևանքով: Այս համատեքստում հնարավոր է, որ հիպոթետիկ ՀԱՍԵ-ն որոշում կայացնի ինքնալուծարքի եղանակով իր գործունեությունը դադարեցնելու մասին: Կամ այն կարող է լուծարվել դատարանի որոշմամբ՝ օրենքի խախտում կատարելու դեպքում:

Հակապատմական պետք է համարել երկու հազարամյակ գործող և ազգային համարվող կառույցին սոսկ դասական կրոնական կազմակերպության կարգավիճակ տալը և նրա իրավասուբյեկտությունը մասնավոր իրավական ռեժիմներով սահմանված գործոններից կախվածության մեջ դնելը:

(c) *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նյութական և հոգևոր ժառանգության՝ որպես ազգային հարստության պետական պաշտպանության բացակայությունը:* 23.08.1990թ. Հայաստանի անկախության մասին հռչակագրի 7-րդ կետի համաձայն.

«7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ ... մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է»:

Սահմանադրությամբ նախատեսված չէ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը, (օրինակ՝ Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, «Հայոց Այբուբեն» և «Ոսկե Խաչ» աշխատանքները), որպես ազգային հարստություն ամրագրելու և պետության հատուկ պաշտպանության ներքո գտնվելու մասին որևէ դրույթ:

Իրավական ակտերով սահմանված չէ նաև Եկեղեցու սեփականությունը համարվող այս ժառանգությունների օգտագործման, տնօրինման կարգը և սահմանափակումները<sup>6</sup>: Օրինակ՝ խիստ հիպոթետիկ վերը նշված արժեքները, որպես պարտավորության ապահովման միջոց, կարող են գրավադրվել, օտարվել, արգելադրվել կամ նրանց նկատմամբ կարող են կիրառվել բռնագանձման կամ բռնագրավման նորմերը (այս մասին հաջորդիվ):

## 1.2. Փոփոխությունների ընդհանուր ուղղությունները

1. Սահմանադրությամբ անհրաժեշտ է հստակեցնել ՀԱՍԵ-ի իրավաբանական կարգավիճակի հիմունքները՝ այն ճանաչելով որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (սահմանադրորեն ամրագրել նրա օբյեկտիվորեն գոյություն ունեցող կարգավիճակը):

2. Սահմանադրությամբ պետք է ամրագրել դրույթ, ըստ որի ՀԱՍԵ-ի սեփականությունը հանդիսացող ժառանգությունը համարվում է համազգային հարստություն: Պետության ունի պոզիտիվ պարտականություն՝ ՀԱՍԵ-ի հետ համատեղ իրականացնելու այդ ժառանգության պաշտպանությունը:

*2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (դոկտրինայ, պատմական և համեմատական տեսանկյունները)*

<sup>6</sup> Նման կարգ նախատեսված չէ նաև եկեղեցական իրավունքով (ՀԱՍԵ-ի լոկալ ակտերով):

## 2.1. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (դոկտրինալ տեսանկյունը)

(a) *Հանրային իրավունքի իրավաբանական անձի դոկտրինը*: Գերմանական և մինչհոկտեմբերյան հեղափոխության ռուսական իրավագիտության մեջ ընդունված է (էր) իրավաբանական անձանց դասակարգել հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց: Հանրային իրավունքի իրավաբանական անձինք (հանրային իրավական միավորում, հանրային կազմակերպություն) են համարվելու և համարվում եկեղեցիական միությունները, պետությունը և նրա կազմում գտնվող ինքնակառավարվող համայնքները<sup>7</sup>:

Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի նույնականացման, այնուհետև սահմանադրական ճանաչման համար կարևոր է հանրային իրավունքի իրավաբանական անձի (ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձի) տարբերակիչ հատկությունների իմացությունը: Համառոտ ներկայացնենք այդ առանձնահատկությունները:

*Նախ*՝ հանրային իրավունքի իրավաբանական անձը հետապնդում է ոչ թե մասնավոր շահեր (օրինակ՝ իր հիմնադիրների, անդամների համար շահույթի ստացում), այլ հանրային (հասարակական) շահեր:

*Երկրորդ*՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակը, կամ առնվազն կարգավիճակի հիմունքները սահմանվում են Սահմանադրությամբ կամ պետական այլ նորմատիվ ակտով: Օրինակ՝ պետական մարմինների կարգավիճակը սահմանվում է ոչ թե կանոնադրությամբ, այլ Սահմանադրությամբ, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով<sup>8</sup>:

*Երրորդ*՝ ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց, հանրային իրավունքի իրավաբանական անձանց ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում (ինչպես նաև այլ հարցերում) վերջիններիս ինքնավարությունը էապես սահմանափակված է: Ռուս նշանավոր իրավագետ Ե. Տրուբեցկոյը նշում էր. «Հանրային իրավական բնույթ ունեցող իրավաբանական անձի գոյությունը կախված չէ իր անդամների կամքից: Այս տեսակի իրավաբանական անձը չի կարող դադարել գոյություն ունենալուց նույնիսկ իր անդամների միաձայն վճռով: Համալսարանը չէր դադարի գոյություն ունենալ պրոֆեսորների և համալսարանական իշխանության վճռի ուժով, քանի որ այն հետապնդում է ոչ թե մասնավոր նպատակներ, այլ ժողովրդի կրթության ապահովման հասարակական նպատակ»<sup>9</sup>:

*Չորրորդ*՝ հանրային իրավունքի իրավաբանական անձինք ոչ միշտ է, որ ունեն կանոնադրություն. այն ոչ միշտ կարիք ունի պետական գրանցման, սակայն միշտ ստեղծվում և գործում է որոշակի իրավական ակտի հիման վրա: Պետական

<sup>7</sup> Ильин И. А. Теория права и государства. Под редакцией и с предисловием В. А. Томсинова. М.: Изд. Зерцало, 2003. С.125, Эннекцерус Л. Курс германского гражданского права. Том I, полутом 1: Введение и общая часть; Перевод с 13-го немецкого издания. М.: 1949.С. 23, 128.

<sup>8</sup> Чиркин В. Е. Юридическое лицо публичного права. Ин-т государства и права Российской акад. наук. М.: Норма, 2007: Ի դեպ, Նշված հեղինակը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի հատուկ հատկանիշ նշում է նաև հանրային իշխանության հետ հատուկ կապերի առկայությունը: Դրանք իրականացնում են հանրային իշխանություն, կամ մասնակցում են դրա իրականացմանը, կամ խտրադ եղանակով պայքարում են իշխանության հասնելու համար (կուսակցություններ) կամ ազդում են նրա վրա որպես ճնշման (ազդեցության) խմբեր հանդիսացող հասարակական կազմակերպություններ (группы давления)): Նա նշում է՝ եկեղեցին չի համարում հանրային իրավունքի իրավաբանական անձ միայն այն բանի համար, որ եկեղեցին օժտված չէ հանրային իրավունքի իրավաբանական անձի նշված հատկանիշով: Մինչև ժամանակ, հեղինակն ընդունում է, որ սահմանադրական իրավունքում առկա է նաև այլ մոտեցում, ըստ որի եկեղեցին հանրային կազմակերպություն է, քաղաքական համակարգի մաս է: См. у Чиркин В.Е. Указ. в. էջ 97: Նշենք, որ տեսական աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Չիրկինի առանձնացրած այս հատկանիշը տարածում չունի:

<sup>9</sup> Трубецкой Е. Н. Лекции по энциклопедии права. М.: Т-во Тип. А. И. Мамонтова, 1917. С. 187.

գրանցման առկայության դեպքում՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց համար կիրառվում է պետական գրանցման առանձնահատուկ ընթացակարգեր:

*(b) Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ*

**(1) Տեսապատմական տեսանկյունը:** Հետզոտսատորներն առաջիններից էին, որ եկեղեցին անվանել են կորպորացիաներ (որպես անձ, որը տարբերվում է իրականում գոյություն ունեցող մարդուց)<sup>10</sup>:

Հանրային և մասնավոր իրավունքների իրավաբանական անձանց դոկտրինալ դասակարգման համակարգում եկեղեցին համարվել է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (հանրային միավորում, հանրային հանրույթ): Օրինակ՝ գերմանացի իրավաբանները մեծ եկեղեցական համայնքները, տարբեր երկրների կաթոլիկ եկեղեցին և ավետարանական եկեղեցին, իրենց վեհաքանչ զարգացման և պատմականորեն ձևավորված կարգավիճակի առանձնահատկությունների շնորհիվ, համարել են հանրային հանրույթ (Общениа)<sup>11</sup>: Մինչև հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի ռուս տեսաբանները<sup>12</sup> և քաղաքացիական իրավունքի մասնագետները<sup>13</sup> քրիստոնեական եկեղեցին նույնպես դիտարկել են հատուկ հանրային-իրավական միավորում:

**(2) Իրավահամեմատական տեսանկյունը:** Իրավահամեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրոնական կազմակերպությունը դասվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքին առնվազն հետևյալ դեպքերում:

*Առաջին՝* կրոնական կազմակերպությունը թեև գրանցված է որպես իրավաբանական անձ, սակայն պետությունը նաև հատուկ ակտով ճանաչում է նրա հատուկ կարգավիճակը: Այս դեպքում նա դասվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքին և հնարավորություն է ստանում գործել հանրային կյանքում (պետության հետ կնքել համաձայնագրեր, աշխատել հիվանդանոցներում, զինված ուժերում, քրեակատարողական ծառայություններում):

Վրաստանում ճանաչվել է Եկեղեցու՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակը: Վրացական պետության և Վրաց Առաքելական ինքնուրույն ուղղափառ Եկեղեցու միջև կնքված սահմանադրական համաձայնագրի 1-ին հոդվածում սահմանված է, որ Եկեղեցին պատմականորեն ձևավորված իրավաբանական անձ է և հանրային իրավունքի սուբյեկտ է, ով իր գործունեությունը ծավալում է եկեղեցական նորմերի հիման վրա՝ Վրաստանի Սահմանադրության և օրենքներին համապատասխան:

Սահմանադրական համաձայնագրում նախատեսված են վրացական եկեղեցու՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակից բխող հետևյալ դրույթները՝

«Պետությունը օրենքով նախատեսված կարգով ճանաչում է եկեղեցու կատարած ամուսնությունը: Իրավական հարաբերություններում օգտագործվում են ամուսնության պետական գրանցման տվյալները (հոդված 3).

<sup>10</sup> Герваген Л.Л. Развитие учения о юридическом лице. СПб: типография И. Н Скороходова, 1888. С. 17.

<sup>11</sup> Регельсбергер Ф. Общее учение о праве. Перевод И. А. Базанова, под ред. проф. Ю. С. Гамбарова. Типография И. Д. Сытина. М.: 1897. С. 99.

<sup>12</sup> Хвостов В. М. Общая теория права: Элементарный очерк / 6-е изд., испр. и доп. С.-Пб.: Н. П. Карбасников, 1914.

<sup>13</sup> Кавелин К. Д. Права и обязанности по имуществам. СПб. 1879. С. 17, Шершеневич Г. Ф. Учебник русского гражданского права. Казань. 1896. Изд. 2, С. 104, Дювернуа Н.Л. Чтения по гражданскому праву. С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1902. С. 197.



Պետությունը եկեղեցու հետ համաձայնագրով պարտավորվում է զինվորական կազմավորումներում և բանտերում ապահովել հոգևորական ինստիտուտների կազմավորումը (հոդված 4).

Հոգևորականը ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից (հոդված 4).

Կրթական հաստատություններում ուղղափառ հավատքի առարկայի ուսուցումը կամավոր է (հոդված 5).

Պետությունը և եկեղեցին օրենքով նախատեսված կարգով փոխադարձ և հավասար հիմքերով ճանաչում են կրթական համակարգին վերաբերող համապատասխան կրթական հաստատություններին տրված փաստաթղթերը, գիտական կոչումներն ու աստիճանները (հոդված 5):»

Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1509-րդ հոդվածում իրավաբանական անձինք դասակարգվում են երկու խմբի՝ հանրային և մասնավոր: Քաղ. օր-ի նշված հոդվածում 05.07.2011թ. կատարված լրացումների համաձայն՝ Վրացական Եկեղեցին համարվել է հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Ընդ որում՝ մյուս կրոնական կազմակերպությունները նույնպես կարող են ճանաչվել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, եթե տվյալ կրոնական ուղղությունը Վրաստանի հետ ունի պատմական կապ, կամ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրությամբ ճանաչված է որպես կրոն (Քաղաքացիական օրենսգրքի 1059.1-րդ հոդված): Կրոնական կազմակերպությանը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ գրանցելը չի սահմանափակում այդ կազմակերպության իրավունքը՝ գրանցվելու նաև որպես ոչ առևտրային կազմակերպություն (մասնավոր իրավունքի իրավաբանական անձ) կամ իր գործունեությունը ծավալել որպես չգրանցված միություն:

Մեկ այլ օրինակ: Ղազախստանի և Սուրբ Աթոռի միջև կնքված ու 1999թ. Նախագահի կողմից հաստատված համաձայնագրի 10-րդ հոդվածում սահմանված է, որ Ղազախստանի Հանրապետությունը կնպաստի պետական առողջապահական հիմնարկներում, խնամքի կամ կալանքի վայրերում գտնվող հավատացյալ անձանց հոգևոր աջակցության ցուցաբերմանը <sup>14</sup>:

*Երկրորդ*՝ կազմակերպությունը դառնում է հանրային իրավունքի իրավաբանական անձ որպես կանոն պետական եկեղեցի համարվելու ուժով: Այսպես՝ Ֆիլանդիայում պետական լուսնաբերական և ուղղափառ եկեղեցիները ունեն հանրային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ: Պետական եկեղեցի համարվող կրոնական կազմակերպության ստեղծման հարցերը որոշվում են եկեղեցական իրավունքով, իսկ մյուս կրոնական կազմակերպությունները, որոնք մասնավոր իրավունքի սուբյեկտ են, գործում են կրոնի ազատության մասին օրենքի հիման վրա:

Հունաստանում, որտեղ հունական ուղղափառ եկեղեցին պետական է, նրա բոլոր ստորաբաժանումները հանրային իրավունքի իրավաբանական անձինք են և ստեղծվում են Նախագահի ղեկընդնկմամբ: Մյուս կրոնական կազմակերպությունները գործում են քաղաքացիական օրենսդրության հիման վրա:

Արգենտինայի քաղաքացիական օրենսգրքով միայն Հռոմեական կաթոլիկ եկեղեցին ունի հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ մյուսները՝ մասնավոր իրավունքի իրավաբանական անձին ենք<sup>15</sup>:

<sup>14</sup> [http://adilet.zan.kz/rus/docs/U990000141\\_](http://adilet.zan.kz/rus/docs/U990000141_)

<sup>15</sup> Подпригора Р. Религиозные объединения как субъекты гражданского права: история, современность и зарубежный опыт // <https://online.zakon.kz>

Ըստ Գերմանիայի Հիմնական օրենքի 140-րդ հոդվածի (Վայմարյան սահմանադրության 137-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի հետ համակցությամբ)՝ մեծ եկեղեցիները մինչ այսօր համարվում են հանրային իրավունքի կորպորացիաներ, որոնք այդպիսին էին 1919 թ. Վայմարյան սահմանադրության ուժի մեջ մտնելու ժամանակ: Մնացած կրոնական կազմակերպություններին, իրենց դիմումի համաձայն, շնորհվում է նման կարգավիճակ, եթե նրանք իրենց կանոնադրությամբ և անդամների թվով երաշխիք են հանդիսանում իրենց հետագա գոյության համար<sup>16</sup>:

Իտալիայում Սուրբ Աթոռի խնդրանքով ստեղծվել է հատուկ կոմիտե, որը աշխատանքների արդյունքում հայտարարել է, որ մասնավոր իրավաբանական անձի ստեղծման, կառուցվածքի, կառավարման և դադարման քաղաքացիական իրավունքի կանոնները չեն կարող կիրառվել կաթոլիկ կամ ճանաչված այլ կրոնական կազմակերպությունների դեպքում<sup>17</sup> :

*(c) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:* Մեզ չհաջողվեց գտնել որևէ պաշտոնական կամ համալիր դոկտրինալ<sup>18</sup> աղբյուր, որտեղ ՀԱՍԵ էքսպլիցիտ (ակնհայտորեն) կճանաչվեր որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Այս կարգավիճակի տեսանելի ճանաչման բացն ունի իր օբյեկտիվ պատճառները, քանի որ հանրային իրավունքի իրավաբանական անձի դոկտրինը խորհրդային և հետխորհրդային իրավագիտության մեջ տարածում չունեի (այս հասկացությունը իրավաբանական եզրութաբանությունում լայն գործածություն չունեի): Հայաստանում «հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը իրավական (օրենսդրական) ակտերում առաջին անգամ օգտագործվեց 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածում (Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է):

Այն, որ ՀԱՍԵ իր էությամբ (օբյեկտիվ կարգավիճակով) հանրային իրավունքի իրավաբանական անձ է, հնարավոր է հաստատել ոչ միայն նրա՝ որպես ազգային եկեղեցու սահմանադրական ճանաչումից, այլև հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ վերը նշված հատկանիշների նույնականացման միջոցով:

*Նախ՝* ՀԱՍԵ՝ որպես կազմակերպություն, հետապնդում է հանրային բնույթի նպատակ՝ ապահովում է Հայ ժողովրդի մոտ 96.5 տոկոսի<sup>19</sup> քրիստոնեական դավանանքի կազմակերպումը և իրացումը<sup>20</sup>:

*Երկրորդ՝* ՀԱՍԵ գործում է հատուկ օրենքի հիման վրա («ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենք):

*Երրորդ՝* ՀԱՍԵ ստեղծման կամ լուծարման ոլորտում առկա են հանրային իրավունքի իրավաբանական անձին ներհատուկ՝ առանձնահատկություններ: Եկեղեցին պետականորեն ճանաչվել է բարձրագույն պետաիշխանական ակտով՝ 301թ. Տրդատ Գ-ի հրովարտակով (այս մասին տե՛ս 2.2. բաժինը): Եկեղեցու գոյությունը կախված չէ որևէ մեկ կամփից, այն՝ որպես հանրային-հոգևոր կյանքի

<sup>16</sup> Ջաքս Միխայել Սահմանադրական իրավունք II: Հիմնական իրավունքներ. մաս I. Հիմնական իրավունքների տեսություն: Թարգմ. Լ. Սարգսյան, մասնագիտական խմբ. և թարգմ. Վ. Պողոսյան. Եր.: Տիգրան Մեծ, 2015, էջ 110-111:

<sup>17</sup> Long G. Church Autonomy and Religious Liberty in Italy // Church Autonomy. P. 326. Цит. по Подопригора Р. Указ. Работа.

<sup>18</sup> Հայ իրավաբաններից ՀԱՍԵ՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի մասին խոսել է իրավունքի դոկտոր՝ Գ. Հովհաննիսյանը (Գերմանիա):

<sup>19</sup> <https://armstat.am/file/doc/99478603.pdf>

<sup>20</sup> Հանրային կյանքում Եկեղեցու դերակատարությունը էապես կախված է Եկեղեցու հետևորդների քանակից: Օրինակ՝ Լատինական Ամերիկայում կաթոլիկ եկեղեցին սահմանադրական իրավունքի վրա ունի էական ազդեցություն: Լատինական Ամերիկայում Կաթոլիկ եկեղեցու դերը և նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ բնակչության բացարձակ մեծամասնությունը (90%) դավանում են կաթոլիցիզմ: Տե՛ս u Конституционное право зарубежных стран. Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина. М.: Норма, 2004. էջ 711:

կարևոր դերակատար չի կարող դադարել գոյություն ունենալ (լուծարվել): Ավելին, հենց հայ ազգի և հայոց լեզվի գոյությունն են կանխորոշում նաև հայոց ազգային Եկեղեցու անխախտ կեցությունը:

Ուստի ՀԱՍԵ գործունեությունը չի կարող է դադարեցվել ինքնալուծարքի կամ հարկադիր լուծարման (սնանկացում և այլն) հետևանքով<sup>21</sup>:

*Չորրորդ՝* ՀԱՍԵ, որպես սահմանադրության հիման վրա գործող անձ, չպետք է կարիք ունենա պետական գրանցման (նրա քաղաքացիական գործունակությունը կարելի է ապահովել այլ եղանակներով) կամ նրա պետական գրանցումը պետք է կատարել պատմական առանձնահատկությունների հաշվառմամբ: Կրկին նշենք՝ հակապատմական պետք է համարել այն, որ պոզիտիվ օրենսդրության պահանջների հիման վրա Եկեղեցին՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում՝ որպես իրավաբանական անձ գրանցվեց 07.12.2007թ. («ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ՝ հիմնադրված Հակոբ Գևորգյանի և Ներսիսյան Գարեգին Բ-ի կողմից):

Այս կապակցությամբ Գ.Դանիելյանը նշում է. «Հաճախ հնչող այն հարցը, թե ինչպես կարող է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին չլինել կրոնական կառույց, եթե իրականացնում է կրոնական գործունեություն, և ընդհանրապես՝ ի՞նչ է այն, եթե ոչ կրոնական կազմակերպություն, ըստ էության, հիմնագուրկ է, քանի որ անտեսվում է այդ կառույցի սահմանադրական կարգավիճակը: Դժվար չէ նկատել, որ այս հարցադրումների հիմքում ընկած է այն մտայնությունը, որ ցանկացած կառույց պետք է պատկանի օրենսդրությամբ նախատեսված որևէ կազմակերպատիրավական տեսակի, սակայն շրջանցվում է այն, որ ՀԱՍԵ արդեն իսկ ունի սահմանադրական կարգավիճակ, ճանաչված է որպես ազգային եկեղեցի, ուստի անվերապահորեն պետք է գործի հենց Սահմանադրության ուժով: Առնվազն տրամաբանական, ողջամիտ չէ արդեն իսկ Սահմանադրությամբ նախատեսված որևէ կառույցի՝ օրենքով վերապահել կազմակերպատիրավական որևէ տեսակին պատկանելու պարտավորություն՝ դրանից բխող իրավական հետևանքներով հանդերձ»<sup>22</sup>:

## **2.2 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (պատմական տեսանկյունը)**

*(a) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանրային իրավական կարգավիճակի օբյեկտիվ-պատմական բնույթը:* ՀԱՍԵ-ի հատուկ կարգավիճակը (հանրային իրավունքի իրավաբանական անձ լինելը) օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատմական փաստ է, որը լավագույնս հնարավոր է ներկայացնել և հիմնավորել իրավունքի պատմական դպրոցի (Գ. Հուգո, Կ. Սավինի, Գ. Պուխտա և այլն) իրավաբանական տեսանկյունից, ըստ որի՝ ինչպես լեզուն, այնպես էլ իրավունքը, սահմանվում է ոչ այնքան օրենսդրի, որքան ինքնուրույն զարգացման նորմերի տարերային ձևավորման արդյունքում:

«Եկեղեցին գերակայող դիրք է ստանում ժողովրդի և եկեղեցու ներքին պատմական կապի շնորհիվ: Ժողովրդի և եկեղեցու միջև կենդանի պատմական կապն այն բարձր

<sup>21</sup> Այս հարաբերություններին առնչվող որոշ հարցերի կարգավորումների առանձնահատկությունները պետք է սահմանել Եկեղեցու և ՀՀ-ի կողմից կնքվող համաձայնագրով:

<sup>22</sup> Դանիելյան Գ. Մտքի, խղճի և կրոնի ազատության կառուցակարգային և իրավական երաշխիքները ՀՀ Սահմանադրությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017, № 3 (24), էջեր 25-41:

արժեքն է, որի շնորհիվ գերակայող եկեղեցին առավելություններ է ստանում մյուսների համեմատությամբ»<sup>23</sup>:

ՀԱՍԵ-ի հատուկ հանրային-իրավական կարգավիճակը բխում է հայ ազգային հոգու, հայ ժողովրդի գիտակցության խորքերից: Ընդ որում՝ քրիստոնեությունը հայ ժողովրդի ոգում ամրապնդվել էր շատ ավելի վաղ, քան այն 301թ. որպես պետական կրոն հռչակելը<sup>24</sup>: Մելիք-Թանգեանը նշում է.

«Բացի ներքին տեղեկություններից, ունինք արտաքին աղբյուրներ Լուսավորչից առաջ քրիստոնեայ հայերի մասին. այդ վկայությունները տալիս են Տերտուլիանոս, Եսեբիոս, Փիրմիլիանոս: Օրինակ՝ Փիրմիլիանոս Կեսարիայի եպիսկոպոսը նոյն վկայությունն է տալիս, որ Հայաստանում բազմաթիվ քրիստոնեաներ կային. նա Գ դարու մարդ էր: Մաքսիմիանոսի զորքերի ջարդը քրիստոնեայ հայերի կողմից հանուն կրոնի ընդդեմ կռապաշտութեան հայերի նոր քրիստոնեայ դարձած ժամանակ՝ Տրդատի օրով ապացոյց է, որ քրիստոնեությունը վաղուց խոր արմատ էր ձգած հայերի մեջ, այլապես նորադարձները հանուն կրոնի այդպիսի եռանդուն միջոցներ չէին գործադնիլ: Ուրեմն կարօտ չէ ապացուցութեան, որ նախալուսավորչեան եկեղեցի ունեցել են հայերը եւ այն էլ Հայաստանի բոլոր անկիւններում, որտեղ տիրապետում էր երկու մեծ հոսանք՝ հունական եւ ասորական»<sup>25</sup> :

Ստորև հակիրճ կներկայացվի այն պատմական փաստերը, որոնցից կարելի է մակարերել, որ Եկեղեցու հատուկ (հանրային) իրավական կարգավիճակը օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրողություն է, իսկ դրա սուբստանցիան ի սկզբանե գտնվում է «ժողովրդական ոգու» միջավայրում:

*(b) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի հաստատումը բարձրագույն պետաիշխանական ակտով*

**(1) Եկեղեցու պետական ճանաչումը 301թ. թագավորի հրովարտակով:** Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մասին վկայող գլխավոր աղբյուրի՝ Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Տրդատ Գ արքան հրաման տվեց ամբողջ Հայաստանով մեկ տարածել նոր ուսմունքը, հեթանոսական մեհյանների տեղում հիմնել եկեղեցիներ և այդ առաքելության իրականացումը (ղեկավարումը) վստահեց Մր. Գրիգոր Լուսավորչին.

«Ապա թագավորը իսկույն տիրաբար **հրաման** տվեց, ամենքին հավանությամբ, գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի»<sup>26</sup>:

Ագաթանգեղոսի վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը արքայի օժանդակությամբ Հայոց երկրում «գավառների ամեն կողմերում եկեղեցիների հիմքեր դրեց, սեղաններ կանգնեցրեց և քահանաներ կարգեց»<sup>27</sup>:

301 թ. Տրդատ արքայի կարգադրությամբ և Գրիգոր Լուսավորչի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց որպես պետական կրոն, և Հայաստանը

<sup>23</sup> Чичерин Б. Н. Философия права. Избранные сочинения. М.: Изда. Юрайт, 2017. С. 220.

<sup>24</sup> Ագաթանգեղոսի ավանդապատմական վկայություններից հետևում է, որ մինչև Տրդատի քրիստոնեա դառնալը, նոր կրոնը դավանել են ոչ միայն նրա կինն ու քույրը, այլև որոշ ազդեցիկ նախարարներ: Ավելին, ըստ մեկ այլ աղբյուրի (**Հովհան Մամիկոնյան**) նախարարները թագավորի հետ մեկնում են Արտաշատ, որպեսզի դիմավորեն Խոր վիրապից դուրս եկող Գրիգորին, ապա վեց օր ունկնդրում են նրա հոգեմորոգ քարոզները: Այս փաստերը վկայում են, որ Գրիգորին բանտից ազատ արձակելը կատարվել է նաև նախարարների կամակցությամբ: Դրանք նաև Հիմք են տալիս կարծելու, որ նախքան պետական կրոն հռչակվելը, քրիստոնեությունը մուտք էր գործել նաև հայոց արքունիք: Տե՛ս Վարդանյան Վ. Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն առնչվող մի քանի հարցերի շուրջ: «Լրաբեր», 1998, թիվ 1, էջ 36:

<sup>25</sup> Մելիք-Թանգեան Հայոց եկեղեցական իրաւունքը. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008. էջ 688-689:

<sup>26</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 437:

<sup>27</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, գլ. ՃԺԷ, Երևան, 1983, էջ 463:

դարձավ առաջին քրիստոնյա երկիրը, իսկ 303 թ. նորընտիր կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը Արածանի գետում մկրտեց արքային և ողջ հայ ժողովրդին<sup>28</sup>:

«301 թվականն արդեն բավարար է հաստատելու, որ Հայաստանն աշխարհում առաջինը եղավ, որտեղ թագավորը, թագավորական գերդաստանը, նախարարները, բանակն ու ժողովուրդը միասնաբար քրիստոնեություն ընդունեցին, և քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակվեց»<sup>29</sup>:

Մելիք-Թանգեանը, մեջբերելով եկեղեցու պատմության անգլիացի մասնագետ Ռոբերթսոնին, նշում է.

«Քրիստոնեությունը քաղաքացիական կրոն դարձաւ Հայաստանում Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի ձեռքով 303 թուին, ամենաառաջին ազգը, որ ամբողջութեամբ ընդունեց այդ կրօնը, է՝ Հայոց եւ առաջին պա ին է վայելում բոլոր աշխարհում այդ տեսակետից (Ռօբերթսօն՝ անգլիացի, Եկեղ. պատմ.)<sup>30</sup>:

Ի տարբերություն 313թ. Միլանի Էդիքտի (Հրովարտակի) որով պարզապես օրինականացվեց, «թույլատրվեց» քրիստոնեությունը Հռոմեական կայսրությունում, 301թ. Հայաստանում կայացավ երկրի մկրտությունը, որով խաչի հովանու ներքո խոնարհվեց ոչ միայն **երկրի** բնակչությունն, այլև իշխանությունը<sup>31</sup>:

Ազաթանգեղոսի վկայությամբ՝ Գ. Լուսավորիչին Տրդատ թագավորը բազմեցնում է արքունիքի երկրորդ գահին<sup>32</sup>: Տրդատ Գ-ի հրամանով եկեղեցուն հողաբաժիններ հատկացվեցին բոլոր բնակավայրերում<sup>33</sup>: Քրիստոնեության պետականորեն հռչակումից հետո Մբ. Գրիգոր Լուսավորչի ջանքերով կարճ ժամանակամիջոցում ստեղծվեց եկեղեցական նվիրապետական (վարչական) կառույց<sup>34</sup>, և թագավորը Հայոց եկեղեցուն պատվիրակեց հասարակական-պետական մի շարք բնագավառների կառավարման գործառույթներ: Դրանք են՝ կրթություն, դատական իշխանություն, կանոնադիր (օրենսդիր) իշխանություն, սոցիալական ապահովություն, արտաքին քաղաքականություն:

Իրավագետ Գ. Հովհաննիսյանը, քննարկելով այն հարցը, թե Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը արդյոք համապատասխանում է հանրային իրավունքի իրավաբանական անձի ստեղծման առանձնահատկություններին, նշում է.

«Ինչպես գիտենք, մ.թ. 301 թ. Հայոց արքա Տրդատ Գ Մեծի հրովարտակով ( = **պետական իշխանական ակտ**) քրիստոնեությունը հռչակվում է Մեծ Հայքի պետական կրոն, և դրանով հիմնադրվում է Հայ առաքելական եկեղեցին իբրև հանրային իրավունքի կազմակերպություն, որը հիմնականում իրականացնում է հանրային խնդիրներ»<sup>35</sup>:

Ընդ որում, այս ժամանակաշրջանում եկեղեցին պետության համաձայնությամբ սկսում է նախաձեռնել նաև իրավական նորմեր սահմանելու գործընթացը: Այսպես՝ Տրդատի համաձայնությամբ Գրիգոր Լուսավորիչը ընդունեց Նիկիայի կանոնները (325թ.) և Հավատքի բանաձևը, հավելեց նոր կանոններ, որոնք ի գործ դրվեցին<sup>36</sup>:

**(2) Պոլսո հայոց պատրիարքության հիմնադրումը 1461թ. օսմանյան կայսրի հրամանով:** Պոլսո հայոց պատրիարքությունը (Արևմտյան Հայաստան) 1461թ.

<sup>28</sup> Օրմանյան Մ. արք., Ազգապատում, հտ. Ա., Էջմիածին, 2001, էջ 81-83, 98-99:

<sup>29</sup> Օրմանյան Մ. արք., Հայոց Եկեղեցին, Երևան, 2016, էջ 28-29:

<sup>30</sup> Մելիք-Թանգեան Հայոց եկեղեցական իրաւունքը. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 684:

<sup>31</sup> Պապայան Ռ. Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները: Էջմիածին, 2002, էջ 600:

<sup>32</sup> Եզնիկ Արք. Պետրոսյան Հայ Եկեղեցու պատմություն (Ա մաս) – Երևան, 2016, էջեր 46-47:

<sup>33</sup> Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 467:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 477: Ուիլսոնէս Էպիսկոպոս, Պատմութիւն, Վաղարշապատ, 1871, էջ 100:

<sup>35</sup> Hovhannisyán G., Wo endet Europa? Ist Armenien ein europäischer Staat? [Որտե՞ղ է վերջանում Եվրոպան: Արդյո՞ք Հայաստանը եվրոպական պետություն է], in: Scorl/Sander (Hrsg.): Die Identität Europas – Was ist „europäisch“? [Եվրոպայի ինքնությունը: Ի՞նչ է նշանակում «Եվրոպական»], Hamburg 2011, S. 260-261

<sup>36</sup> Մելիք-Թանգեան Հայոց եկեղեցական իրաւունքը. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 257:

հիմնադրվել է Օսմանյան կայսր Մեհմեդ Բ-ի նախաձեռնությամբ: Պոլսոս պատրիարքությունը թուրքական կառավարության մոտ կատարել է Օսմանյան կայսրության հայ համայնքի ներկայացուցչի դերը և մասնակցել է հայկական համայնքին վերաբերող իրավաստեղծ գործունեությանը<sup>37</sup>:

1863-1896թ. և 1908-1915թ.<sup>38</sup> Օսմանյան կայսրության իրավական համակարգի մաս է կազմել «Հայոց ազգային Սահմանադրությունը», որը 1863 թ. մարտի 17-ին հաստատվել է թուրքական կառավարության կողմից<sup>39</sup>: Այս ակտով Պոլսոս պատրիարքը պաշտոնապես ստացել է «ազգի ղեկավարի» կարգավիճակը: Ըստ «Հայոց Ազգային Սահմանադրության» Պոլսոս պատրիարքին կից գործելու էին նաև Ազգային ընդհանուր ժողովը և Ազգային կենտրոնական վարչությունը, որոնք ստանձնելու էին համապատասխան բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինների կարգավիճակ:

Այս պատմական փաստերը վկայում են, որ Արևմտյան Հայաստանում Պոլսոս հայոց պատրիարքությունը ունեցել է հատուկ հանրային-իրավական կարգավիճակ. մասնավորապես՝ այն հիմնադրվել և գործել է բարձրագույն պետական իշխանության ակտով:

**(3) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի հաստատումը 1836թ. ռուսական կայսրի հրամանով:** 1828 թ. Արևելյան Հայաստանը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ, և հայ ժողովրդին իր շուրջը համախմբած կաթողիկոսանիստ Սուրբ Էջմիածնի գործունեությունը հայտնվեց ռուսական կայսեր ուշադրության ներքո: Ելնելով կայսրության քաղաքական նպատակներից՝ ռուս կայսեր Նիկոլայ I-ը որոշեց Հայ Առաքելական եկեղեցու համար նոր կարգուկանոն հաստատել և հանձնարարեց իրավասու պետական մարմիններին կազմել Եկեղեցու կառուցվածքի և կառավարման մասին ակտի նախագիծ<sup>40</sup>:

Նոր կանոնադրություն կազմելու աշխատանքները գլխավորել է Կովկասի կառավարչապետ գեներալ Ի. Պասկևիչը: 1829 թ. նա կազմեց գաղտնի հանձնաժողով՝

<sup>37</sup> Աշյան, Վարդան Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանը XVIII դարավերջին և XIX դարի առաջին կեսին. Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԾԴ (Բ-Գ). 1998, էջ 201:

<sup>38</sup> Հայոց ազգային Սահմանադրությունը գործեց դադարներով: Մասնավորապես 1866թ., երբ ազգային ժողովների և պատրիարքի միջև տարաձայնություններ արդյունքում Բ Դուռը (այդպես էր ընդունված կոչել Օսմանյան գերագույն իշխանությանը) դադարեցրեց Սահմանադրության գործողությունը: 1868թ. Մարտին, սակայն, տարաձայնությունը շտկվեց, Սահմանադրությունը վերագործարկվեց, իսկ նոր պատրիարք նշանակվեց Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ): Սահմանադրությունը հիմնականում գործել է 1869-1891թթ., ապա ընդհատումներով՝ 1891-1896թթ., որից հետո դադարել է՝ հիմնականում գործելով մինչև 1908թ.: Երիտթուրքական սահմանադրության տարիներին և ընդհուպ մինչև հայերի ցեղասպանությունը այն գործել է իբրև զուտ ազգային կանոնադրություն՝ կառավարության առավել շեշտված վերահսկողության պայմաններում և ինչպես միշտ, զուրկ որևէ քաղաքական արժեքից: Հայերի ցեղասպանության տարիներին՝ 1915-1916 թթ. երիտթուրքերը վերացրեցին Ազգային սահմանադրությունը: Երիտթուրքական կառավարությունը (Թալեաթի նախաձեռնությամբ) միացրեց Սսի, Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները՝ այս գործընթացն ավարտելով 1916 թ., երբ Սսի կաթողիկոսական աթոռը փոխադրվեց Երուսաղեմ: Առաջին աշխարհամարտում թուրքերի կրած պարտությունից հետո օսմանյան նոր կառավարությունը վերացրեց վերոհիշյալ վերաձևումները և վերահաստատեց Ազգային սահմանադրությունը 1918 թ. նոյեմբերի 20-ի հրովարտակով: Լոզանի կոնֆերանսից (1922 թ., նոյեմբերի 20-1923 թ., հուլիսի 24) հետո Ազգային սահմանադրությունը, ինչպես և Թուրքիայի բոլոր հպատակ փոքրամասնությունների կանոնադրությունները, վերացվեցին: Տե՛ս Խառատյան Ա. Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին. Պատմա-բանասիրական հանդես (2). 2008, էջեր 89, 92:

<sup>39</sup> Երկարատև պայքարից հետո, 1863 թ. մարտի 17-ին թուրքական կառավարությունը, ի գործածություն պատրիարքարանին, հանձնեց վերաքննված և իր հաստատած սահմանադրությունը: Վերաքննված սահմանադրությունը Ազգային ընդհանուր ժողովն ընդունեց 1863 թ. մարտի 20-ին: Տե՛ս Եղիազարյան Կ., Գևորգյան Մ. Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու., Խմբ. խորհուրդ՝ Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.: Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջ 107:

<sup>40</sup> Ըստ ռուսական աղբյուրների՝ Եկեղեցու գործունեությունը կարգավորող պետական փաստաթղթի նախագծի վրա աշխատում էին երկու կոմիտե, սակայն վերջնական փաստաթուղթի կազմումը հանձնարարվեց Օտարերկրա դավանանքի հոգևոր գործունեության ռուսական Դեպարտամենտին: Այդ փաստաթուղթը քննարկվել է Պետական խորհուրդում, իսկ 1838թ. հաստատվել է Ռուս կայսերի կողմից: Տե՛ս Красножен М.Е. Иноверцы на Руси. Том 1: Положение неправославных христиан в России / Типография К. Маттисена, 1900. С. 92-93.

բաղկացած 4 անձից (իշխան Բ. Ն. Բեհբույթով, Սերովբե վրդ. Կարնեցի, ուսուցիչ Հակոբ Շահան Ջրպետյանը և ռուսական աստիճանավոր, ազգությամբ լեհ Օչկին): Հանձնաժողովի կողմից Կովկասում կազմված կանոնադրությունը որոշ փոփոխությունների ենթարկվեց Պետերբուրգում, ապա ուղարկվեց գլխավոր կառավարիչ Ռոզենին՝ քննարկելու<sup>41</sup>: Նոր կանոնադրությունը, որը ընդունված է կոչել «Պոլոժենիա», 1836 թ. մարտի 11-ին հաստատվեց կայսեր կողմից<sup>42</sup> և 1837 թ. հունվարի 1-ից այն դարձավ կիրառելի:

Ընդ որում՝ Ռուսաստանի կազմում Հայոց Եկեղեցին բաժանվում էր 6 թեմերի (Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի, Շամախու, Նոր Նախիջևան-Բեսարաբիայի, Աստրախանի), որոնց առաջնորդները նշանակվում և ազատվում էին կայսեր հրամանագրով<sup>43</sup>:

Այս պատմական փաստերը վկայում են, որ Ռուսաստանի կազմում Եկեղեցին շարունակել է ունենալ հատուկ իրավական կարգավիճակ, նա գործել է պետական բարձրագույն իշխանության կողմից սահմանված ակտի հիման վրա:

**(4) Ազգային եկեղեցու օրենսդրական ճանաչումը 1991թ-ին:** Ինչպես նշվեց, Հայաստանի անկախության հռչակումից հետո՝ 17.06.1991թ. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպության մասին» ՀՀ օրենքով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին պաշտոնապես համարվեց որպես ազգային եկեղեցի:

**(5) Ազգային եկեղեցու սահմանադրական ճանաչումը 2005թ-ին:** 2005թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեց, Հայ Եկեղեցու որպես ազգային եկեղեցու մասին դրույթ (2015թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ դրույթը պահպանվեց՝ առանձին հոդվածով): Ազգային եկեղեցու սահմանադրական ճանաչմանը տրամաբանորեն պետք է հաջորդեր ազգային եկեղեցու հատուկ իրավաբանական կարգավիճակի (որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի) սահմանադրական ամրագրումը կամ այն պետք է ամրագրվեր այդ հարաբերությունները կարգավորող հատուկ օրենքով:

*(c) Պետության և Եկեղեցու հանրային-իրավական սիներգիան. դարերի պատմություն*

**(1) Կաթողիկոսի բացառիկ հանրային իրավասությունները:** Աշխարհիկ իշխանության հետ փոխհարաբերություններում Կաթողիկոսները ի սկզբանե ձեռք են բերել հետևյալ իրավունքները.

1. Թագավորից հետո նա համարվել է երկրորդ մարդը, իսկ եկեղեցու մեջ և եկեղեցական նվիրապետության մեջ՝ առաջինը: Ըստ Փավստոս Բյուզանդի՝ միայն Կաթողիկոսն իրավունք ուներ արքունիքում օրհնելու հացը: Կաթողիկոսն անգամ կարող էր վարքի համար նախատել արքային, թագուհուն կամ այլ երևելի անձանց<sup>44</sup>:

2. Հայոց թագավորներին օժելու իրավունքը պատկանում էր միմիայն հայոց կաթողիկոսներին: Համապատասխան ծեսը կատարելու նպատակով Մաշտոց ծիսամատյանում ներառվել է «Թագավոր օժելու» հատուկ կարգ: Այսպես՝ Բագրատունեաց առաջին թագավոր Աշոտին օժելու համար հրավիրվեց Գևորգ Բ

<sup>41</sup> Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 537-538:

<sup>42</sup> Ռուսական որոշ աղբյուրներում նշվում է, որ կանոնադրությունը ռուսական կայսերի կողմից հաստատվել է 1838թ.: Տե՛ս Красножен М.Е. Иноверцы на Руси. Том 1: Положение неправославных христиан в России / Типография К. Маттисена, 1900. С. 92-93.

<sup>43</sup> Павлов А. С. Курс церковного права – Свято-Троицкая Сергиева Лавра: Собственная типография, 1902. С. 287.

<sup>44</sup> Փավստոս Բյուզանդ, Պատմություն Հայոց, Ե դար., գլ. ԻԹ, Գ դար., գլ. Գ., Երևան, 1968, էջ 266, 68:

Գառնեցի կաթողիկոսը, որը օժեց նաև նրա ժառանգ Սմբատին<sup>45</sup>: Կիլիկյան Հայաստանի Լևոն Բ արքային օրհնեց և օժեց Գևորգ Զ Ապիրատը<sup>46</sup>:

Աղթամարի Ստեփանոս Դ կաթողիկոսը՝ վասպուրականցիների ազգային ոգին բարձրացնելու, օտարազգի տիրակալներից ազատելու ակնկալիքները գորեղացնելու համար, իր ազգական Սմբատին 1465 թ. Աղթամարի Ս. Խաչ վանքում եկեղեցական ծիսակարգով օժեց թագավոր<sup>47</sup>: Նշյալ օրհնակները հերթական անգամ ցույց է տալիս Հայոց Եկեղեցու ազգային բնույթը և պետականամետ քաղաքականությունը:

3. Ազգային եկեղեցական ժողովներ հրավիրելու և ցրելու իրավունքը պատկանում էր կաթողիկոսին, մինչև իսկ եթե թագավորները ներկա էին գտնվում ժողովին: **Աշխարհիկ իշխանությունը օգնում էր և կարգը պահպանում:**

4. Կաթողիկոսի նախագահությամբ և հրավերով եղած ազգային ժողովը վավերական է այն դեպքում, երբ մասնակցում են ժողովի հայոց նահանգների հոգևոր և աշխարհական պատգամավորները<sup>48</sup>:

5. Դարեր շարունակ մեծ դատավարության իրավունքը պատկանել է Հայոց Եկեղեցուն՝ գլխավորությամբ հայրապետի, ինչի ապացույցն է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն<sup>49</sup>:

Հայոց պետականության բացակայության ժամանակաշրջաններում Ամենայն հայոց կաթողիկոսը հանդես է եկել նաև որպես հայ ժողովրդի գլուխ և վարել քաղաքական գործունեություն:

**(2) Պետության և Եկեղեցու սիներգիան Ազգային եկեղեցական ժողովներում:** Պատմությունը վկայում է, որ հայ ժողովրդի համար տարբեր ոլորտներում վարքագծի նորմատիվ կանոնները սահմանել են նաև հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ գործող ազգային եկեղեցական ժողովները:

Առաջին պաշտոնական ազգային Եկեղեցական ժողովը, ըստ պատմիչների վկայության, 354թ. (365թ.) Ներսես Մեծի գլխավորությամբ Աշտիշատի ժողովն է, որին մասնակցում էին ինչպես հոգևորականներ, այնպես էլ աշխարհականներ: Մ. Խորենացին ասում է.

«ժողով արարեալ եպիսկոպոսաց, եւ համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց... (գլ. Գ. Ներսէսը)»<sup>50</sup> :

Այս ժողովում սկիզբն է դրվում պաշտոնական կանոնների սահմանման գործընթացի:

Եկեղեցու՝ որպես հանրային իրավունքի սուբյեկտի օբյեկտիվ կարգավիճակի պատմական ասպեկտն ընկալելու համար կարևոր է հետևյալ երկու հանգամանքները:

*Առաջին*՝ եկեղեցական ժողովներին մասնակցել է ոչ միայն հոգևոր իշխանությունը, այլ աշխարհիկ իշխանությունը: Օրինակ՝ ըստ Խորենացու և Բյուզանդի՝ Աշտիշատի եկեղեցական ժողովին կաթողիկոսը հրավիրել է նաև աշխարհիկ իշխանությանը,

<sup>45</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 140-143, 148-151:

<sup>46</sup> Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 472:

<sup>47</sup> Վարդանյան Վ., Աղթամարի կաթողիկոսության պատմություն, Էջմիածին, 2017, էջ 105-106:

<sup>48</sup> Մելիք-Թանգեան Հայոց եկեղեցական իրաւունքը. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 710-712

<sup>49</sup> «Կանոնագիրք Հայոց»-ը ամփոփում է տարբեր դարերում Հայոց Եկեղեցու կազմած և ընդունած եկեղեցական, ծիսական, բարոյախրատական, գաղափարաքաղաքական, տնտեսական-քաղաքացիական խնդիրներ ընդգրկող կանոններ, որոնցով կարգավորվել է հայ հասարակության ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ կյանքը: Կանոնագիրք Հայոց, աշխ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Ա.-Բ, Երևան, 1964, 1971:

<sup>50</sup> Մեջբերումն ըստ Մելիք-Թանգեանի աշխատության, էջ 257:



ընդհուպ՝ «գլխովին թագավորին», սակայն հայտնի չէ՝ թագավորը ժողովին ներկա եղել է, թե ոչ:

Ընդ որում՝ ազգային եկեղեցական ժողովներին աշխարհիկ իշխանության մասնակցությունը Հայ Եկեղեցու բացառիկ առանձնահատկությունն է: Այս կապակցությամբ Մելիք-Թանգեանը նշում է.

«Ժողովին հրավիրուած էին երկու դասակարգն էլ, հոգևոր եւ աշխարհական, այս փառաւոր սկզբունքը մնաց իբրեւ հիմնական կէտ մեր պատմութեան մէջ հետակայ դարերի բոլոր ժողովներում. Մինչեւ անգամ ոչ թէ կարգադրական, հապա դաւանաբանական հարցեր որոշող բոլոր մեր ժողովներում մասնակցել են աշխարհականները. շեշտելի է այս սկզբունքը այն տեսակետից, որ միուս եկեղեցիները կարող են նախանձով նայել այս բանիս վրայ եւ ձգտել նոյն դրութեան հասնել, քանի որ եկեղեցի ասելով հասկանում ենք հաւատացեալների ժողով, որը երկու դասակարգի մասնակցութեամբ միայն կարող է վճռել բոլոր եկեղեցական հարցերը եւ խնդիրները»<sup>51</sup>:

*Երկրորդ*՝ Եկեղեցական ժողովը իր իրավասության ներքո գտնվող հարցերով կանոններ էր սահմանում ոչ միայն հոգևոր իշխանության ու բնակչության համար, այլև աշխարհիկ իշխանության համար: Օրինակ՝ Աշտիշատի ժողովի ժամանակ սահմանված առաջին կանոնով Նախարարներին արգելվեց իրենց տոհմական ժառանգությունը պահպանելու նպատակով մերձավոր ազգականների միջև խնամություն անել:

**(3) Պետության և Եկեղեցու սիներգիան Աշխարհաժողովներում:** Պետության և եկեղեցու բացառիկ սիներգիան երկկողմանի էր: Ինչպես աշխարհիկ իշխանությունն էր մասնակցում Եկեղեցական ժողովներին, այնպես էլ հոգևոր իշխանությունն էր մասնակցում Աշխարհաժողովներին<sup>52</sup>:

Արքան Աշխարհաժողով էր հրավիրում երկրի հոգևոր առաջնորդի ընտրության հարցի առթիվ: Ահա թե ինչպես է ներկայացվում նման իրավիճակներից մեկը Փավստոս Բուզանդի երկում.

«Այն ժամանակ աշխարհովին միաբան խորհուրդ արեցին, թե ով պետք է դառնա հայրապետության կաթողիկոսը»<sup>53</sup>:

Աշխարհաժողով հրավիրվում էր նաև արքային գահընկեց անելու հարցով, որին մասնակցում էր նաև Կաթողիկոսը: Օրինակ՝ Արշակ Բ-ին գահընկեց անելու հարցով կաթողիկոս Ներսես Մեծի մոտ տեղի ունեցած աշխարհաժողովին մասնակցում էին երկրի մեծամեծներից մինչև շինականների դասապետները: Արքայի պաշտոնանկությունը ձախողվում է կաթողիկոսի միջամտության շնորհիվ<sup>54</sup>:

*(d) Միջանկյալ եզրակացություն:* Վերոշարադրյալից հնարավոր է մակաբերել, որ հայ ժողովրդի ազգային հոգու և գիտակցության խորքերում է գտնվում ազգային Եկեղեցու՝ որպես պետական (հանրային-իրավական) ինստիտուտի գաղափարը: Ազգային Եկեղեցու հանրային իրավական կարգավիճակը պատմականորեն ձևավորված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող ճանաչված փաստ է, որը պարզապես պետք է ժամանակակից իրավաբանական եզրութաբանությամբ

<sup>51</sup> Մելիք-Թանգեան Հայոց եկեղեցական իրաւունքը. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 258:

<sup>52</sup> Աշխարհաժողովն իրավասու էր մշակելու և ընդունելու բոլորի համար պարտադիր կանոններ, օրենքներ, լուծելու պետական նշանակության կարևորագույն հարցեր, ինչպիսիք են պատերազմ հայտարարելը, կաթողիկոսի ընտրությունը և անգամ թագավորին գահընկեց անելը: Աշխարհաժողովը սովորաբար գումարվում էր արքայի հրամանով, որն էլ նախագահում էր ժողովում. «Ամեն կողմից, ըստ հրամանի, շուտափույթ հասան նշանակված վայրը՝ Վաղարշապատ քաղաքը՝ Այրարատ գավառում, և հենց թագավորն էլ ճամփա ընկնելով՝ հասավ այնտեղ» [4, ՃԺԱ, 791]: Տե՛ս Մովսիսյան Ա. Աշխարհաժողով, հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր // «21-րդ ԴԱԲ», թիվ 3 (13), 2006, էջ 165:

<sup>53</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Գ դար., գլ. ԺԵ, էջ 102:

<sup>54</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Դ դար., գլ. ԾԱ, էջ 208-210:

ամրագրել բարձրագույն իշխանության (սահմանադրի) կողմից ընդունված ակտում (Սահմանադրությունում):

### **2.3. Ազգային (պետական) եկեղեցիների սահմանադրական ճանաչումը (իրավահամեմատական տեսանկյունը)**

*(a) Ազգային եկեղեցիների սահմանադրական ճանաչումն արտասահմանյան երկրներում:* Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի անդամ հանդիսացող մի շարք պետություններում սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված են այս կամ այն եկեղեցու կամ կրոնի հատուկ դերը, իսկ դրանցից մի քանիսում առկա է նույնիսկ պետական կրոն (state religion) կամ պետական եկեղեցի (established church) հասկացությունները: Բոլոր այն երկրներում, որտեղ գործում են սվյալ երկրի պատմական, ազգային և մշակութային կյանքում կարևոր դերակատարություն իրականացրած եկեղեցիներ, այդպիսիք, որպես կանոն գործում են անմիջապես երկրի հիմնական օրենքի ուժով: Այսպես՝

**Դանիա** - Դանիացիների մեծամասնությունը՝ 62% Դանիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու հետևորդներ են: Դանիայի Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ Ավետարանական Լյութերական Եկեղեցին Դանիայի պետական եկեղեցին է և պաշտոնապես ղեկավարվում է Դանիայի թագուհու կողմից: Եկեղեցու սպասավորները ֆորմալ առումով քաղաքացիական ծառայողներ են, որոնք աշխատում են Եկեղեցական Գործերի Նախարարությունում: Դանիայի բոլոր քաղաքացիների համար քաղաքացիական ակտերի գրանցումն իրականացվում է եկեղեցու կողմից, որի համար եկեղեցին վճարվում է պետության կողմից: Պետությունը օրենքով պարտավոր է ֆինանսապես և այլ ձևերով աջակցել Դանիայի եկեղեցուն: Պետությունը կարող է աջակցել նաև այլ կրոնական դավանանքներին, բայց օրենքով չունի նման պարտականություն:

**Իսլանդիա** - Իսլանդիայի Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Ավետարանական Լյութերական եկեղեցին Իսլանդիայի ազգային եկեղեցին է և որպես այդպիսին պաշտպանվում ու աջակցություն է ստանում պետության կողմից: Իսլանդիայի բոլոր դպրոցներում քրիստոնեական կրթությունը պարտադիր է:

**Լիխտենշտեյն** - Լիխտենշտեյնի Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին Լիխտենշտեյնի պետական եկեղեցին է և որպես այդպիսին վայելում է պետության լիարժեք պաշտպանությունը: Այլ դավանանքները իրավունք ունեն հետևելու հավատալիքներին և իրականացնել իրենց ծիսակատարությունները այնքանով, որքանով դրանք համապատասխանում են բարոյականության նորմերին և չեն խախտում հասարակական կարգը: Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ դպրոցներում կրոնական կրթությունն իրականացվում է եկեղեցու կողմից:

**Հունաստան** - Հունաստանի Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հունաստանում գերիշխող կրոնը Քրիստոսի Արևելյան Ուղղափառ եկեղեցու դավանանքն է: Հունաստանի Ուղղափառ եկեղեցին, ընդունելով Տեր Հիսուս Քրիստոսին որպես իր գլուխը, անբաժանելիորեն միավորված է Կոստանդնուպոլսի Քրիստոսի Մեծ Եկեղեցու և նույն վարդապետությանը հետևող Քրիստոսի յուրաքանչյուր այլ եկեղեցիների հետ և անվերապահորեն հետևում է սուրբ առաքելական և սինոդի կանոններին, սուրբ ավանդույթներին: Հունաստանի Ուղղափառ Եկեղեցու քահանաները համարվում են պետական ծառայողներ և նրանց

աշխատավարձերը վճարվում են պետական բյուջեից, այս գումարը տարեկան կազմում է մոտ 200 միլիոն եվրո:

**Հունգարիա** – Հունգարիայի Սահմանադրության նախաբանում նշվում է՝ մենք հպարտ ենք, որ մեր թագավոր Սուրբ Իշտվանը (Saint Stephen) կառուցել է Հունգարիայի պետությունը ամուր հիմքի վրա և հազար տարի առաջ մեր երկիրը դարձրել է քրիստոնեա Եվրոպայի մաս: Նախաբանում նաև նշվում է՝ մենք գնահատում ենք քրիստոնեության դերը ազգապահպանության գործում :

**Մալթա** – Մալթայի Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ Մալթայի կրոնը Հռոմեական Կաթոլիկ Առաքելական Կրոնն է: Հռոմեական Կաթոլիկ Առաքելական Եկեղեցու իշխանությունները ունեն պարտականություն և իրավունք սովորեցնելու, թե որ սկզբունքներն են ճիշտ և որոնք սխալ են: Հռոմեական Կաթոլիկ Առաքելական հավատքի կրոնական կրթությունը ապահովվում է Մալթայի բոլոր պետական դպրոցներում՝ որպես կրթական ծրագրի պարտադիր մաս:

**Մեծ Բրիտանիա** – Սկսած 1701 թվականից, երբ ընդունվել է Հաստատման Ակտը (Act of Establishment), որը, ի դեպ սահմանադրական օրենքներից մեկն է, Անգլիայի պաշտոնական պետական եկեղեցին Անգլիական Եկեղեցին է: Թագուհին հանդիսանում է Անգլիական Եկեղեցու գերագույն ղեկավարը և այսպես կոչված՝ հավատի պաշտպանը: Անգլիական Եկեղեցու եպիսկոպոսներից 26-ն ի պաշտոնե Լորդերի Պալատի անդամ են: Համաձայն օրենքի՝ Անգլիայի միապետ կարող է լինել միայն Անգլիական Եկեղեցու հետևորդ: Քրիստոնեական կրոնական դաստիարակությունը ուսուցանվում է Միացյալ Թագավորության հիմնական և միջնակարգ դպրոցներում: Ի տարբերություն մյուս կրոնական կազմակերպությունների՝ Անգլիական եկեղեցու կրոնական ծեսով կատարած ամուսնությունն ունի իրավական ուժ:

**Մոնակո** – Մոնակոյի Սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է, որ Կաթոլիկ, Առաքելական և Հռոմեական դավանանքը Մոնակոյի պետական կրոնն է:

**Նորվեգիա** – Նորվեգիայի Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ Նորվեգիայի եկեղեցին՝ Ավետարանական-Լյութերական Եկեղեցին պետք է մնա Նորվեգիայի պետական եկեղեցին և որպես այդպիսին պետք է աջակցություն ստանա պետության կողմից:

**Վրաստան** – Վրաստանի Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Վրացական պետությունը դավանանքի և կրոնի ազատության հետ մեկտեղ, ճանաչում է Վրաց Ուղղափառ Եկեղեցու բացառիկ պատմական դերը և նրա անկախությունը պետությունից: 2002թ-ին ընդունված «Եկեղեցու և պետության միջև սահմանադրական համաձայնագրով» կարգավորվել են եկեղեցի պետություն հարաբերությունները:

*(b) Եվրոպական դատարանի դիրքորոշումն ազգային եկեղեցու հատուկ կարգավիճակի վերաբերյալ:* Եվրոպական դատարանը դեռևս 1989թ. Darby v. Sweden գործով որոշման մեջ ուղղակիորեն անդրադարձել է ազգային եկեղեցի ունենալու հանգամանքին: Դատարանը (Հանձնաժողովը) արձանագրել է.

«Պետական եկեղեցի ունենալու համակարգը ինքնին Եվրոպական Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չէ: Իրականում, այդպիսի համակարգ գոյություն ունի մի շարք Անդամ պետություններում և այն գոյություն ուներ արդեն այն ժամանակ, երբ կազմվում էր Կոնվենցիայի նախագիծը և երբ նրանք դարձան դրա անդամ: Այնուամենայնիվ, Պետական եկեղեցի ունենալու համակարգը, որպեսզի բավարարի 9-րդ հոդվածի պահանջները, պետք է ներառի հատուկ երաշխիքներ անհատի կրոնական ազատությունների վերաբերյալ: Մասնավորապես, ոչ ոք չի կարող ստիպված լինել անդամակցելու կամ լքելու պետական եկեղեցին»:

Հատկանշական է, որ վերը թվարկված պետություններից 7-ի մասով Եվրոպական դատարանը երբևէ չի արձանագրել Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի (Մտքի, խղճի և կրոնի ազատություն) խախտում: Այդ պետություններն են՝ Դանիա, Հունգարիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Մալթա, Մոնակո, Նորվեգիա: Այսինքն՝ նշված 7 պետություններում Եվրոպական դատարանի մակարդակով ոչ միայն երբևէ չի քննարկվել եկեղեցու սահմանադրական կարգավիճակը, այլ նաև երբևէ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել: Այս պետությունները գերազանց օրինակ են թե ինչպես կարելի է ունենալ սահմանադրությամբ հաստատված հատուկ կարգավիճակով ազգային եկեղեցի կամ կրոն, սակայն չունենալ որևէ խնդիր այլ կրոնների և դրանց հետևորդների հետ:

Վրաստանը, Հունաստանը և Միացյալ Թագավորությունը եկեղեցու կամ կրոնի սահմանադրական կարգավիճակ ունեցող այն երեք պետություններն են, որոնց վերաբերյալ առկա են Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճիռներ: Վրաստանի վերաբերյալ առկա է Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման վերաբերյալ 3 վճիռ<sup>55</sup>, որոնցից ոչ մեկը չի վերաբերում Վրաց Ուղղափառ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակին:

Միացյալ Թագավորության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման վերաբերյալ Եվրոպական դատարանը կայացրել է 2 վճիռ<sup>56</sup>, որոնցից ոչ մեկը կրկին չի վերաբերում Անգլիական Եկեղեցու սահմանադրական կարգավիճակին: Հունաստանին վերաբերող Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման վերաբերյալ կա 16 վճիռ<sup>57</sup>: Այս վճիռներից, որևէ մեկում, ինչպես Մեծ Բրիտանիայի և Վրաստանի դեպքում, Եվրոպական դատարանի կողմից խախտման փաստի արձանագրման համար հիմք չի հանդիսացել Հունաստանի Ուղղափառ եկեղեցու սահմանադրությամբ նախատեսված հատուկ կարգավիճակը:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ մինչ այս պահը Հայաստանի վերաբերյալ 5 գործով<sup>58</sup> Եվրոպական դատարանը արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում, սակայն դրանցից ոչ մեկը չի վերաբերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակին: Այս 5 վճիռներից, որևէ մեկում նույնիսկ չի հիշատակվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անունը: Հայաստանի վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում արձանագրած բոլոր գործերը վերաբերում են Եհովայի վկաների իրավունքների խախտումներին:

*(c) Ազգային եկեղեցու հատուկ կարգավիճակն ամրագրելու արգելք նախատեսող իրավական չափորոշիչի բացակայությունը:* Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ սահմանադրությամբ կամ

<sup>55</sup> TSARTSIDZE AND OTHERS v. GEORGIA (Application no. 18766/04); BEGHELURI AND OTHERS v. GEORGIA (Application no. 28490/02); 97 MEMBERS OF THE GLDANI CONGREGATION OF JEHOVAH'S WITNESSES AND 4 OTHERS v. GEORGIA (Application no. 71156/01).

<sup>56</sup> EWEIDA AND OTHERS v. THE UNITED KINGDOM (Applications nos. 48420/10, 59842/10, 51671/10 and 36516/10); O'DONOGHUE AND OTHERS v. THE UNITED KINGDOM (Application no. 34848/07)

<sup>57</sup> KOKKINAKIS v. GREECE (Application no. 14307/88), MANOUSSAKIS AND OTHERS v. GREECE (Application no. 18748/91), EFSTRATIOU v. GREECE (Application no. 24095/94), VALSAMIS v. GREECE (Application no. 21787/93), LARISSIS AND OTHERS v. GREECE (Application no. 23372/94), SERIF v. GREECE (Application no. 38178/97), THLIMMENOS v. GREECE (Application no. 34369/97), AGGA v. GREECE (Applications nos. 50776/99 and 52912/99), AGGA v. GREECE (No 4) (Application no. 33331/02), AGGA v. GREECE (No 3) (Application no. 32186/02), ALEXANDRIDIS v. GREECE (Application no. 19516/06), DIMITRAS AND OTHERS v. GREECE (Application nos. 42837/06, 3237/07, 3269/07), DIMITRAS AND OTHERS v. GREECE (No. 2) (Application nos. 34207/08, 6365/09), DIMITRAS AND OTHERS v. GREECE (No. 3) (Application nos. 44077/09, 15369/10, 41345/10), DIMITRAS AND GILBERT v. GREECE (Application no. 36836/09), PAPAVALAKIS v. GREECE (Application no. 66899/14).

<sup>58</sup> BAYATYAN v. ARMENIA (Application no. 23459/03), TSATURYAN v. ARMENIA (Application no. 37821/03), BUKHARATYAN v. ARMENIA (Application no. 37819/03), ADYAN AND OTHERS v. ARMENIA (Application no. 75604/11), AGHANYAN AND OTHERS v. ARMENIA (Applications nos. 58070/12 and 21 others).

օրենքներով բացառիկ պատմական նշանակություն ունեցող ազգային եկեղեցուն հատուկ կարգավիճակ տալու որևէ արգելք սահմանված չէ, իսկ այդ կարգավիճակից բխող որոշակի օրենսդրական առանձնահատկություններ սահմանելը ինքին չի դիտարկվում իբրև անհատի խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտում:

Եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի անդրադառնում անդամ երկրներում եկեղեցու և պետության փոխհարաբերություններին: Սա ոչ թե իրավական բաց է, այլ գիտակցված լռություն է: Բանն այն է, որ Եվրոպայում որոշ պետությունների սահմանադրություններ ավելի շուտ են կարգավորել եկեղեցի-պետություն հարաբերությունները, քանի Եվրոպական կոնվենցիան է ընդունվել: Եթե Կոնվենցիան նախատեսեր հատուկ կարգավիճակ ունեցող ազգային եկեղեցի ունենալու արգելք, ապա Միացյալ Թագավորությունը, Նորվեգիան, Շվեդիան, Իսլանդիան Կոնվենցիան չէր վավերացվի:

Եվրոպական դատարանի նախադեպերը չեն պարունակում որևէ արգելք կամ պահանջ կապված եկեղեցի – պետություն հարաբերությունների հետ: Եթե հարգվում են բոլորի կրոնական ազատությունները, ապա եկեղեցու և պետության հարաբերությունների կարգավորումը թողնված է տվյալ պետության հայեցողությանը:

Հետևաբար, Եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև Եվրոպական դատարանի որևէ նախադեպ չի պարունակում բացառիկ պատմական նշանակություն ունեցող ազգային եկեղեցու համար հատուկ կարգավիճակ սահմանելու արգելք:

Ավելին, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային մյուս պայմանագրերը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (հոդված 18), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (հոդված 8), Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (հոդված 12)) նույնպես որևէ ձևակերպում չեն պարունակում, որը կարող է մեկնաբանվել որպես արգելք սահմանադրությամբ կամ օրենքներով պետության ներսում եկեղեցուն որևէ հատուկ կարգավիճակ տալուն:

### *3. Եկեղեցական ժառանգության՝ որպես ազգային հարստության սահմանադրական ճանաչումը և պետական պաշտպանությունը*

**3.1. Ընդհանուր բնութագիր:** Հայտնի է, որ հայ ժողովրդի պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը (եկեղեցական ժառանգություն) պատմականորեն է հանդիսացել (բացառությամբ՝ խորհրդային ժամանակաշրջանի) և հանդիսանում է Եկեղեցու սեփականությունը:

Օրենսդրության ուսումնասիրության, ինչպես նաև ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունից՝ հարցման հիման վրա ստացված 22.06.2020թ. պատասխաններից պարզ է դառնում՝

1. Եկեղեցական ժառանգությունը (օրինակ՝ Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, «Հայոց այբուբեն» և «Ոսկե խաչը» աշխատանքները) սահմանադրորեն ճանաչված չեն որպես ազգային հարստություն:

2. պետությունը չունի հատուկ պոզիտիվ պարտականություն եկեղեցական ժառանգությունը պաշտպանելու (անվտանգությունը ապահովելու) ոլորտում:

3. հստակեցված չէ Եկեղեցական ժառանգության (ազգային հարստության) քաղաքացիական շրջանառության սահմանափակումների ծավալը:

### 3.2. Եկեղեցական ժառանգության սահմանադրական ճանաչումը և պաշտպանությունը

(a) *Եկեղեցական ժառանգության՝ որպես ազգային հարստության սահմանադրական ճանաչումը:* Գործող Սահմանադրությամբ սահմանված չէ Եկեղեցու սեփականությունը համարվող և հայ ժողովրդի ազգային ինքնության անբաժանելի մասը կազմող մի շարք արժեքների ազգային նշանակությունը:

«ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մասն է:

Ազգային ինքնության կարևորագույն մասը կազմող եկեղեցական ժառանգությունը հիմնադիր իշխանության կողմից ընդունված ակտով պետք է ճանաչել որպես ազգային հարստություն և ազգային ինքնության հենք: Նման պահանջի ամրագրումն առաջ է բերում նաև պետության կողմից ազգային հարստությունը պաշտպանելու և պահպանելու սահմանադրական պոզիտիվ պարտականություն, այդ արժեքները քաղաքացիական շրջանառության մեջ ներգրավելու արգելքներ և սահմանափակումներ:

**Պետության և եկեղեցու միջև կնքվող համաձայնագրում (դրան կից ցանկում) պետք է սահմանել ազգային հարստություն համարվող եկեղեցական ժառանգության ցանկը կամ համաձայնագրում սահմանել այդ արժեքները որոշելու կարգը<sup>59</sup>:**

(b) *Եկեղեցական ժառանգության պետական պաշտպանությունը:* ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «մշակութային ժառանգություն» սահմանադրական ձևակերպումը ունի սահմանափակ մեկնաբանություն: Հստակ չէ, թե այն ներառում է արդյոք եկեղեցու սեփականությունը համարվող հոգևոր, պատմական և վավերագրական ժառանգությունը: Բացի այդ, Սահմանադրության մեջ սահմանված է մշակութային ժառանգության պաշտպանության մասին, սակայն ընթացիկ օրենսդրությամբ և պրակտիկայում առավելագույնս կարգավորվում են Եկեղեցական ժառանգության պահպանության (վերանորոգում, խնամք և այլն) հարցեր:

«ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. «Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների և պաշտամունքային այլ շինությունների պահպանությունը Եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունն իրականացնում են համատեղ»<sup>60</sup>: Այս նորմում սահմանված են միայն եկեղեցական շինությունների պահպանության (խնամքի ապահովում), բայց ոչ պաշտպանության մասին դրույթ: Բացի այդ, չկա նաև շինություն չհամարվող եկեղեցական այլ արժեքների պետական պաշտպանության և պահպանության մասին դրույթ:

<sup>59</sup> Նշվածը վերաբերում է բացառապես ազգային հարստություն համարվող ժառանգությանը, այլ ոչ Եկեղեցու ամբողջական սեփականությանը:

<sup>60</sup> «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Եկեղեցու սեփականությունը և ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը հանդիսացող մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների, արխիվների **պահպանության** և հարստացման համար պետական աջակցության ծավալն ու նպատակը կառավարությունը սահմանում է տվյալ տարվա պետական բյուջեի նախագծով՝ նախապես այն քննարկելով Եկեղեցու հետ (ընդգծումը՝ հեղ.):

Նախարարության 22.06.2020թ. գրությունում նշված է. «Պետության սեփականությունը համարվող պատմական, մշակութային, հոգևոր և վավերագրական ժառանգությունը գտնվում է պետության պահպանության ներքո և պահպանվում է ոչ միայն Նախարարության, այլև ոստիկանության և այլ գերատեսչությունների ուժերով»: Պատասխանից հստակ երևում է, որ պետությունը իրավապահ մարմինների միջոցով ապահովում է միայն պետական սեփականությունը համարվող պատմամշակութային և հոգևոր արժեքները պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է ազգային հարստություն համարվող եկեղեցական ժառանգության ֆիզիկական պաշտպանության ոլորտում պետության գործառույթներին, ապա այս հարցում պետության պարտականությունների իրավական և փաստական վիճակի մասին տեղեկություններ չկան:

Նախարարության 22.06.2020թ. գրության համաձայն՝ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական որևէ ժառանգությունը (օրինակ՝ Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը, «Հայոց այբուբեն» և «Ոսկե խաչը» աշխատանքները)՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են մշակութային արժեքներ, սակայն դրանք պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների պահպանական ցուցակում կարող են գրանցվել միայն սեփականատիրոջ ցանկությամբ: Նախարարության պատասխանից կարելի է ենթադրել, որ վերը նշված ազգային հարստությունը այդ ցուցակում գրանցված չեն:

**Պետության և եկեղեցու միջև կնքվող համաձայնագրում պետք է կարգավորել ազգային հարստություն համարվող եկեղեցական ժառանգության պաշտպանության ոլորտում Եկեղեցու և ՀՀ-ի իրավասությունները և պարտականությունները:**

*(c) Եկեղեցական ժառանգության (ազգային հարստության) քաղաքացիական շրջանառության սահմանափակումները:* Ընդհանուր առմամբ հանրային իրավունքի իրավաբանական անձանց հանձնված հանրային սեփականությունը (հանրային գույքը) չի կարող օտարվել, նրա վրա բռնագանձում չի կարող տարածվել, գույքի վրա արգելք չի կարող դրվել<sup>61</sup>:

Ռուսական իրավունքի պատմությունում Եկեղեցուն արգելվում էր իր գույքը դնել գրավ, սակայն նա կարող էր գույքը դնել ավանդ և ստանալ եկամուտներ: Օրենքով հատուկ սահմանված էր, որ եկեղեցական հողերը և եկեղեցական այլ հանդավարները, անկախ նրանից, թե ինչ եղանակով են դրանք ձեռք բերվել, անձեռնմխելի են և պաշտպանված են կողմնակի ոտնձգություններից: Հատուկ դեպքերում, Միապետը Նախարարների խորհրդի հետ համաձայնեցնելուց հետո, թույլատրում էր եկեղեցական հողերի և հանդավարների վաճառքը կամ փոխանակությունը, եթե այդ գործարքները եկեղեցուն կբերեին էական գույքային օգուտներ<sup>62</sup>:

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

<sup>61</sup> О понятии и правовом статусе юридических лиц публичного права в законодательстве некоторых развитых иностранных государствах и бывших советских республиках // [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=32603692#pos=5;-106](https://online.zakon.kz/Document/?doc_id=32603692#pos=5;-106)

<sup>62</sup> Никифоров С. М. Становление правового института юридического лица публичного права в российском праве XVIII – начала XX вв. Дисс. канд. юрид. наук. М.: 2015. С. 99.

«Մշակութային ժառանգության առարկաները (օբյեկտները) տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները, դրանց նկատմամբ պետական աջակցություն ցուցաբերելու ձևերը սահմանվում են օրենքով»:

Չհաջողվեց պարզել, թե ո՞ր պետական իրավական ակտով կամ եկեղեցական իրավունքի նորմերով են սահմանված Եկեղեցու՝ սեփականությունը համարվող մշակութային ժառանգությունների (եթե դրանք ունեն նման կարգավիճակ), օգտագործման և տնօրինման կարգը<sup>63</sup>:

Մինչդեռ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով պետական ու համայնքային սեփականություն համարվող մշակութային արժեքները և հավաքածուները չեն կարող օգտագործվել որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց (17-րդ հոդվածի 2-րդ մասի)»: Օրենսդրությամբ Եկեղեցու սեփականությունը համարվող մշակութային արժեքների և հավաքածուների համար նման սահմանափակում նախատեսված չէ: Եթե հիմք ընդունենք նաև «Խղճի ազատության և կրոնական կազմակերպության մասին» օրենք 10-րդ հոդվածը, ըստ որի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և կրոնական այլ կազմակերպությունների պատմական հուշարձանների ու պաշտամունքային գույքը օգտագործվում են համաձայն այդ կազմակերպությունների նվիրագործված ավանդական կարգի, ապա տեսականորեն կարելի է նշել, որ Եկեղեցին նման արժեքները կարող է, օրինակ՝ գրավադրել, օտարել...:

**Պետության և եկեղեցու միջև կնքվող համաձայնագրում պետք է կարգավորել նաև ազգային հարստություն համարվող եկեղեցական ժառանգության քաղաքացիական շրջանառության առանձնահատկությունները և սահմանափակումները:**

#### *4. Ակնկալվող արդյունքները*

**4.1. Նեգատիվ խտրականության բացառումը:** Ազգային Եկեղեցուն հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ տալը ամեննին չի նշանակում միջամտություն այլ դավանանքների ազատությանը կամ կրոնական կազմակերպությունների նկատմամբ խտրականության ցուցաբերում:

Ի դեպ, Վենետիկի հանձնաժողովը իր 2017 թ. «Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ ներկայացված կարծիքի 23-րդ կետում նշել է «ԵԱՀ Կ/ԺՀ ՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին եզրակացություններում նշել է, որ Եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակն ինքնին անթույլատրելի չէ, պարզապես չպետք է թույլ տալ, որպեսզի այն հանգեցնի կրոնական կամ համոզմունքի այլ համայնքների նկատմամբ խտրականության», իսկ 24-րդ կետում ընդամենը նշելով, որ կրոնական կազմակերպություններից մեկի համար տարբերվող իրավական կարգավիճակ սահմանելն ինքնին մարդու իրավունքների միջազգային ստանդարտների խախտում չէ<sup>64</sup> :

<sup>63</sup> «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է միայն, որ Եկեղեցու պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական արժեքների՝ **պետական սեփականություն հանդիսացող հատվածը** կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Եկեղեցուն: Այդ արժեքների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը՝ խորհրդակցելով Եկեղեցու հետ:

<sup>64</sup> <https://www.osce.org/hy/odhr/352161>



Թեև նեգատիվ խտրականության հարցն ինքնին կապված չէ Եկեղեցու հատուկ իրավաբանական կարգավիճակի ճանաչման հետ (սա ընթացիկ օրենսդրական քաղաքականության հարց է), սակայն անհրաժեշտ են որոշ պարզաբանումներ:

Սուկ կրոնական (դավանաբանական) գործառույթների իրականացման տիրույթում Հայ Եկեղեցու և կրոնական կազմակերպությունների նկատմամբ պետք է լինի միասնական պետական մոտեցում: Մինևույն ժամանակ՝ հավասարություն պետք է փնտրել հավասարների միջև. անհավասարների միջև մաթեմատիկական հավասարությունը ծնում է անարդարություն:

Դավաբանական ոլորտից դուրս, Եկեղեցին՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ կարող է ունենալ տարբերակված կարգավիճակ: Այսպես՝

1. Միջոցառումներին Ամենայն հայոց կաթողիկոսի մասնակցության դեպքում, որպես կանոն, նա հաջորդում է ավագությամբ ՀՀ նախագահին («Պետական արարողակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի):

2. Ամենայն հայոց կաթողիկոսին տրվում է ՀՀ դիվանագիտական անձնագիր («Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մաս):

3. Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման առթիվ ողջույնի ելույթի իրավունք ունեն Հանրապետության նախագահը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մաս):

4. Սահմանադրական դատարանի շենք մուտք գործելու իրավունք ունեն՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը (Սահմանադրական դատարանի 09.07.2018 թ-ի ՄԴԱՌ-1-Ն որոշմամբ հաստատված կարգ):

**4.2. Սահմանադրության հոդվածի նախագիծ:** Սահմանադրության 18-րդ հոդվածը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի և նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին անջատ է պետությունից: Պետության կողմից պատվիրակված լիազորությունները իրականացնելիս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին գործում է օրինականության սկզբունքի հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարգավորվում են համաձայնագրով <sup>65</sup>:

4. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սեփականությունը համարվող պատմական, հոգևոր, մշակութային և վավերագրական ժառանգությունը՝ որպես

<sup>65</sup> 1918-1920 թթ. Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և ՀՀ միջև կնքվելիք դաշնագրի նախագիծ էր մշակվել, տես՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Ե», Սանդրո Բեհբոյյան, Երևան 1999, 514-516 էջեր: Ավելին, Եկեղեցու և պետության միջև պայմանագրային կամ համաձայնագրային սկզբունքով հարաբերությունների կարգավորում գործում է նաև եվրոպական մի շարք այլ երկրներում՝ Վրաստան, Նուսաստան, Լյուքսեմբուրգ, Ավստրիա, Լեհաստան, Իսպանիա, ինչպես նաև Բելառուսիա, Ղազախստան և այլն:

ազգային հարստություն և ազգային ինքնության հենք, պետության և եկեղեցու պաշտպանության ներքո են:

**4.3. Կապը սահմանադրական այլ նորմերի հետ:** Եկեղեցու հանրային իրավաբանական անձի կարգավիճակի սահմանադրական ճանաչման դեպքում Եկեղեցին հանրային իրավահարաբերություններում (հատկապես պատվիրակված լիազորությունները իրականացնելիս) պետք է կաշկանդված լինի սահմանադրական օրինականության սկզբունքով: Ուստի այս փոփոխությունը կատարելիս պետք է ապահովել Սահմանադրության 6-րդ հոդվածի հետ համակարգային կապը:

Բացի այս, Եկեղեցին որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ ոչ միայն մարդու իրավունքների կրող է, այլ որոշ դեպքերում նաև հասցեատեր: Օրինակ՝ Եկեղեցին պետք է ապահովի մարդու՝ մշակութային արժեքներին հաղորդակից լինելու, եկեղեցու գրադարանային, թանգարանային, արխիվային և այլ հավաքածուներից օգտվելու իրավունքը<sup>66</sup>:

Սահմանադրության 2-րդ գլխում պետք է լրացնել դրույթ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

Յուրաքանչյուր ոք իրավունքը ունի հաղորդակցվելու Եկեղեցու սեփականությունը համարվող մշակութային արժեքներին, օգտվելու եկեղեցու գրադարանային, թանգարանային, արխիվային և այլ հավաքածուներից: Մանրամասները սահմանվում են օրենքով»:

**4.4. Կապը օրենսդրական այլ նորմերի հետ:** Սահմանադրական այլ փոփոխություններով պայմանավորված պետության և եկեղեցու միջև պետք է կնքվի համաձայնագիր: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում կամ այլ ակտերով պետք է սահմանել նման համաձայնագրի կնքման կարգը, դրա տեղը իրավունքի աղբյուրների համակարգում:

Էական փոփոխություններ պետք է կատարվեն նաև մշակութային օրենսդրությունում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

---

<sup>66</sup> «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հաղորդակցվելու մշակութային արժեքներին, մշակութային գործունեության բոլոր ոլորտներում Հայաստանի Հանրապետության գրադարանային, թանգարանային, արխիվային և այլ հավաքածուներից օգտվելու»: